ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Փ. Բուզանդի փ. 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք, էլ. փոստ:gnumner.kanach@yerevan.am

«05» հունվարի 2024թ.

ՀՀ/Ելից 72/03-24

Իշխան Բադալյան Ա/Ձ-ին

(ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Հ. Շիրազի 28

էլ. հասցե՝ badalyanishxan18@gmail.com)

Ծանուցում

պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

2023 թվականի մարտի 17-ին «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և Իշխան Բադալյան Ա/Ձ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքված ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-23/05-3 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով»:

Իշխան Բադալյան Ա/Ձ-ն 2023 թվականի դեկտեմբերի 28-ի գրությամբ հրաժարվել է 7-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքների մատակարարումից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը միակողմանի (մասնակի) լուծում է Պայմանագիրը 7-րդ չափաբաժնի մասով (ցախավել - 2500 հատ)՝ համարելով այն լուծված ընդհանուր **1224150 (մեկ միլիոն երկու հարյուր քսանչորս հազար հարյուր հիսուն) ՀՀ դրամ** գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Իշխան Բաղալյան Ա/Ձ-ն 2023 թվականի դեկտեմբերի 28-ին վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման գումարը, ուստի Պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնելու լիազորված մարմին:

ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՄԵՆ ԲԵԳՈՅԱՆ

Կատարող՝ Ն. Ավագյան
Հեռ.՝ 011-514-745